ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2024 թ.

ԱՐՏԱՇԵՍ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ
ՀՀ Լոռու մարզ, գ.Կուրթան, 12 փող., տուն 4
artasa583@gmail.com

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեր 11.12.2024թ. թիվ 1344726 հարցմանը.

Հայտնում եմ, որ Լոռու մարզպետի աշխատակազմը քաղաքացիների ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ տեղեկանք չի տրամադրում:

Հայաստանի Հանրապետությունում ամուսնության բացակայության մասին տեղեկանքի տրամադրման կարգը և ձևանմուշները հաստատում է Արդարադատության նախարարը: Արդարադատության նախարարի 08.10.2021թ. N 495-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում ամուսնության բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգի 2-րդ կետի համաձայն՝ «Տեղեկանք տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) կողմից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին (նախկինում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձինք), Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:»

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ «Տեղեկանք ստանալու համար դիմումը կարող է ներկայացվել Գործակալություն Գործակալության սպասարկման կենտրոնների կամ քաղաքացիական կացության ակտերի գրանցման սպասարկման կենտրոնների, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված լիազոր օպերատորների (այսուհետ՝ Սպասարկման կենտրոն), ինչպես նաև Արդարադատության նախարարության https://justice.e-gov.am՝ հանրային ծառայությունների մատուցման միասնական հարթակի միջոցով (այսուհետ՝ Էլեկտրոնային հարթակ):»

X _____

Մ Ա Ր Զ Պ Ե Տ՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

կատ. Վ.Հովհաննիսյան
հեռ. /0322/ 4-09-27